ՑՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ[1]

(№ 98 ձեռագրի շարունակությունը ամսագրի նախորդ №-ից):

Թ. 232ա.— Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԴաւզալ խաթունն եւ զծնօղսն իւր զԴաւիթն, եւ զկողակիցն զՂարիպ խաթունն, զԴաւզալի կողակիցն զՍարգիսն, եւ զիւրեանց որդիքն՝ զԱստուածատուրն եւ զՅով(հ)աննէսն, եւ լի բերանովն Աստուած ողորմի ասացէք, ամէն։

Այլ եւ Աստուած ողորմի ասացէք Տէր Յով(հ)ան(ն)իսի հոգոյն. եւ որ Աստուած ողորմին ասէ, Աստուած իւրն ողորմիցի, ամէն։

Յիշեցէք ի Քրիստոս զդարպին Աստուածատո(ւ)ր, որ վանից որչափ բան լինի, զամէն էնայ:

Յիշեցէք ի Քրիստոս եւ Աստուած ողորմի ասացէք Մալխասին եւ իւր կողակցին մահդասի Բէկիչանին եւ իւր որդոց՝ Պօղոսին, Նիկողոսին, որ շուրջառ մի, եւ ուրար մի, եւ մաղզման մի ետ ի դուռ սուրբ Յօվ(հ)աննիսին եւ սուրբ Նարեկացուն՝ անջինջ յիշատակ իւր եւ իւր ծնօղացն, եւ Աստուած ողորմի ասացէք, ամէն։

Թ. 232բ.— Յիշեցէք ի Քրիստոս եւ Աստուած ողորմի ասացէք Ղումրկէ Ամիրկէն, եւ Առաքել, եւ Յոխանին, եւ Յօվ(հ)աննէսին, Մարտիրոսին, Զադաօն Յօվ(հ)աննէսին...

Դարձեալ կրկին անգամ Աստուած օրհնէ զղասապներ, ուր ասնաֆ, որչափ որ տաւար առնին, մօրթեն, տաւրի գլուխն շահի մի խօստացան Պօռայ սուրբ Յով(հ)ան(ն)ու վանից՝ բարի յիշատակ իւրեանց հոգուն, Աստուած օրհնէ, զօրդօրօղն, զտօղն, զկամէցօղն։

Աստուած օրհնէ Սուքիասի(ն), Աստուած ողորմի Մ(ա)րտ(իրո)սի(ն), բուաչի (Ներկարար) Կիրակոսին, Աստուած օրհնէ խաչատուր(ին), Աստուած օրհնէ Թոփալ Մքօին։

Յիշեցէք ի Քրիստոս եւ Աստուած ողորմի ասացէք Պապաճանի որդոյն Յուսէփին, եւ իւր մօրն, եւ իւր հօրօղբօրն Մալխասին, եւ իւր կօղակցուն Էբրասիմին, որ այգի մի ի խանդոնէնիշէն տուվին Պօռավանից սուրբ Յով(հ)ան(ն)իսին, եւ սուրբ Նարեկացօւն, եւ սուրբ Աստուածածնին, եւ սուրբ Ստեփանօսին դուռն՝ անջի(ն)ջ յիշատակ իւրեանց (ն)նջէցէլոց հոգուն։ Եթէ որ ծախէ կամ գրաւ դնէ, զանէցք զԿա(յ)էնին եւ զՅուդային, եւ խաչահանօղաց առցէ...։

Արդ ես՝ Տէր Մարտիրոս անարժանս երէցա(յ), զայս այգիս վերստին տ(ն)կեցի, զամենայն յիշատակ ինձ եւ ամենայն ն(ն)ջէցելոց, ամէն, նոքա զհող տին եւ, ես Տէր Մարտիրոս, տնկէցի։

Թ. 233ա.— Աստուած օրհնէ զՅով(հ)ան(ն)էս, զԱւետիս, զԴաւօն, զԳազպարն, Մարտիրոս, Թէօրոսն, Ասատուրն, Մախսօն, Օխօն, Պէտօն, Մուրտօն, Աւլօն, Լաճօն, Զրօն, Էղօն, խալիֆի չաղաց, աւագ ամպաչաղացւ Օվ այս բանիս յակառակ լինի, զանէցք զՅուդա(յ)ին առցէ եւ զխաչահանօղաց, ամէն։

Յիշեցէք ի Քրիստոս զՓարխիան եւ զեղբարսն իւր զհանգուցեալքն ի Քրիստոս զՕվաէփ վարդապետն, որ եդ ի դուռն սուրբ Յովհաննա(ու) Կարապետին մէկ լաւ ժամու շապիք եւ խմօրի տաշտ մի՝ իւրեանց բարի յիշատակ, եւ ծընօղաց իւրեանց, յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք, եւ Աստուած ձեզ եւ մեզ ողորմե(ս)ցի, ամէն։

Յիշեցէք ի Քրիստոս մահտեսի... դարձեալ որչափ մուլք կայր վանից, ամենայն գէրի էր ինկեած յանօրինաց, ես մեղա(ւ)որ Տէր Մարտիրոս յուսայ յԱստուած աղաչէցի զասնաֆներն գանձանակ դնել մէջ իւր(ե)անց, վէրստին գնէցին զմլքերն, էդին յիշատակ ի դուռն Պօռայ սուրբ Յով(հ)ան(ն)իսին անջինջ յիշատակւ Յիշէցէք ի Քրիստոս եւ Աստուած օղօրմի ասացէք ներկ(ա)րարի ասնաֆին՝ որ զԴաւթի արտերն ազատէցին յանօրինաց, Աստուած օրհնէ զիւրեանց որդիք։ Յիշէցէք ի Քրիստոս եւ Աստուած օղօրմի ասացէք դարբաղի ասնաֆին, որ զՔաշտակի արտէր նոքա ազատեցին, Աստուած օրհնա զիւրեանէ յիշատակ ի Քրիստոս։ Եւ Աստուած օղօրմի ասացէք սօլկարի ուսթէններուն որ զ...ափնեու արտեր նոքա ազատեցին, յիշէցէք ի Քրիստոս եւ Աստուած օղօրմի ասացէք գօնչօց ասնաֆին, որ զԹարտի արտեր նոքա ազատեցին, Աստուած ազատայի զնոցա հոգին ի մեղաց։

Թ. 233բ.— Յիշեցէք ի Քրիստոս Աստուած եւ Աստուած ողորմի ասացէք մահտ(ա)սի Յուսէփին եւ իւր ծնօղացն Բլասիկ Նազարին, եւ մեր Նուրխանին, եւ իւր որդուն Աւագին, եւ իւր կողակցուն Մարգարտին, տընտես Մամին, եւ իւր որդուն Յով(հ)ան(ն)իսին, եւ որդի Վարդանին՝ խ (40) ղոյշ (ղրուշ) տվին ի դուռն Պօռավանից սուրբ Յով(հ)ան(ն)իսին, եւ սուրբ Աստուածածնին, եւ սուրբ Ստեփանոսին, եւ սուրբ Նարեկացուն, Աստուած օրհնէ զիւրեանք, որ զտան ապրանք զամենայն ինչ որ կայր, բերին տվին վանից՝ անջինջ յիշատակ իւրեանց եւ իւրեանց ն(ն)ջեցելոց հոգուն։ Օվ որ հանդիպի եւ կարդայ, խնդրեմք ի ձեզանէ վասն Աստուծոյ սիրուն համար, լի սրտիւ Աստուած ողորմի ասացէք նոցա հոգուն։ Եւ որ զԱստուած ողորմին ասէ, Աստուած իւրեանց ողորմի յաւուրն դատաստանին, ամէն, եղիցի եղիցի։

Այս է յիշատակ է մահտեսի Սարգիսին է Թադէոսեան, որդի Սարգիս, իւր եղպարներ, Ա ողորմիս աւէ(ց)էք։

---

1. Շարունակված 1950 թվի մայիս—հունիս, հուլիս—օգոստոս, սեպտեմբեր—հոկտեմբեր, նոյեմբեր—դեկտեմբեր, 1951 թվի հունվար—մարտ, ապրիլ—հունիս, հուլիս—օգոստոս, սեպտեմբեր—հոկտեմբեր, նոյեմբեր—դեկտեմբեր և 1952 թվի հունվար և փետրվար համարներից։

№ 99

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Թերթերը՝ 249։— Պրակները՝ 20, յուրաքանչյուրը 12 թերթից։— Մեծությունը՝ 38,4×25,5×8 սմ.։— Նյութը՝ խոնացած հասարակ սպիտակ թուղթ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ։— Վիճակը՝ քայքայված՝ սկզբից և վերջից թերի, պրակները հետագայում հետ-առաջ են կազմված։— Գրությունը՝ երկսյուն։— Տողերը՝ 37։— Գծումները՝ ճշգրտով։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրությունը՝ կան գեղեցիկ թռչնագրեր, ձկնագրեր, խաչեր, ծաղիկներ, թռչուններ, գլխազարդեր և լուսանցազարդեր։— Գրիչը՝ Հովհաննես։— Պատվիրատուն՝ Խոջա Հակոբ։— Ժամանակը՝ 16-րդ դար։— Վայրը՝ անհայտ, հավանաբար Պարսկաստան։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 2ա.— Ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս Խոջայ Յակոբին եւ որդոյն իւրոյ Սարգիսին, եւ կողակցոյն իւրոյ Դօվլաթ խանումին, եւ որդւոցն՝ Սարգիսին, Յով(հ)աննէսին, Մարգարին, Սէթին, դստերացն՝ Աճապխանին, Եղսալամին, եւ փոքուն գրչիս, եւ իմ ծնողացն, եւ ամենայն արեան մերձաւոր(ացն)։

Թ. 3ա.— Ողորմեա Քրիստոս Աստուած ըստացողի գրոցս Խոջայ Յակոբին եւ իւր որդոյն Սարգիսին, եւ իւր պապին Յով(հ)ան(ն)էսին, եւ Հանիկին, Խաթունջանին, եւ զմեծ պապին Մէլիքին, եւ միւս պապ պըզտիկ Յով(հ)ան(ն)էսին, եւ նորա կողակից Սառախաթունին եւ ամ(ենայն արեան մերձաւորացն)։

Թ. 205բ.— Որ ողորմի Քրիստոս Աստուած ըստացողի գրոցս Խոջայ Յակոբին եւ իւր ծնողացն Սէթին, Խանաղին, եւ իւր եղբօրն Դաւտին եւ իւր կողակից Մահսում փաշին, եւ դստերացն Խաթունջանին, Խաթային եւ Զանային, եւ Յով(հ)ան(ն)էս անարժան գրչիս, եւ իմոյս վարպետիս Տէր Գասպարին, եւ իւր ծնողացն, կարդացողիս եւ լսողացդ, եւ ամենայն արեան մերձաւորացն, եւ որք զողորմին ասէք, ամէն։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 21բ.—Ես անարժան քահանայ Վարքան գրեցի, ով (ո)ր կարդայ, ինձ յիշի, յի(ն)քն յիշեալ լինի առաջի Քրիստոսի։

Թ. 24ա.— Ես նուաստ ծառայս գրեցի Խաչիկ Աստուածատուրեան ի Նամաւ Գրոցս է մեղապարտ քահանայ..., յիշեցէք ի Քրիստոս, յիշեալ լինեք։

Թ. 72բ.— Ես Մնացականի որդի Համբառ զէս գրեցի, օվ որք կարդայ, մին բերան յիշի, յինքն(ն) յիշեալ (լ)ինի առաջի անմահ գառին Քրիստոսի, ամէն։

Թ. 76բ.— Ես Մնացական։

Թ. 77բ.— Ես Մնացական որդի Համբառ(ի)։

Թ. 138բ.— Տէր Ղազարոսի Մոնիանկուին (?)։

Թ. 139ա.— Ես գրեցի (յ)այսմայուրքիս, օվ օր կարդայ, մին բերան (յիշ(ե)այ, ուրն յ(ի)շի, ես խուտայվերդիս Նիկ(ո)ղոսե(ա)ն։

№ 100

ԻՒՂԱԲԵՐԻՑ ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 4։— Պրակը՝ 1։— Մեծությունը՝ 45,5×32,6×1,2 սմ.։— Նյութը՝ սպիտակ հաստ թուղթ։— Կազմը՝ մանիշակագույն թավշապատ ստվարաթուղթ։ Կողքի երկու երեսներում կան արծաթի վրա փորագրված նկարներ Հիսուսի կյանքից։ Առաջին կողքի նկարը ցույց է տալիս Հիսուսին խաչից իջեցված՝ Տիրամայրը գրկել է իր Որդուն, շրջապատված վեց հոգով։ Խաչի գագաթին գրված է «Յ. Ն. Թ. Հ.»։ Այս ընդհանուր տեսարանը շրջապատված է ձվաձև մի շրջանակով, որի չորս անկյուններում կան մեկական հրեշտակ, իսկ այս՝ շրջապատված է ծաղիկների և տերևների մի գեղեցիկ զարդարանքով։ Երկրորդ կողքի նկարը ցույց է տալիս Հիսուսի Համբարձումը։ Նկարի վերևում Հիսուսը համբառնում է, իսկ ներքևում կա բացված գերեզմանը (վրան երեք հատ «էջ» գրված), շրջապատված երեք կանանցով և մեկ հրեշտակով։ Այս ընդհանուր տեսարանը շրջապատված է ձվաձև մի շրջանակով, որի չորս անկյուններում կան մեկական հրեշտակ, իսկ այս էլ շրջապատված է ծաղիկների և տերևների մի գեղեցիկ զարդարանքով։— Պանդանակներ՝ սկզբում և վերջում մեկական դեղին հասարակ թուղթ։— Վիճակը՝ բավարար։— Գրությունը՝ երկսյուն։— Դատարկ թղթեր՝ 1ա, 4ա, 4բ։— Տողերը՝ 26—40։— Գծումները՝ ճշգրտով։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրությունը՝ ուրեք էջերն էլ շրջանակված են ոսկեգույն գեղեցիկ զարդարանքով։ Թ. 1բ-ում կա Հովհաննես ավետարանչի նկարը բավականի գեղեցիկ։ Կան մի քանի գեղեցիկ թռչնագրեր, իսկ մեծատառերը առհասարակ գրված են ոսկեգույնով։— Ժամանակը՝ 18-րդ դար։— Վայրը՝ հավանաբար Կոստանդնուպոլիս։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հովհաննու ավետարանի առաջին գլուխը և չորս ավետարաններից յուղարերից հատվածները։

Թ. 1բ.— Հովհաննու ավետարան. «Ի սկզբանէ էր բանն...»։

Թ. 2ա.— Մատթեոսի ավետարան. «Վասն յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Թ. 2բ.— Մարկոսի ավետարան. «Վասն թաղման եւ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

Թ. 3ա.— Ղուկասու ավետարան. «Վասն թաղման եւ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

Թ. 3բ.— Հովհաննու ավետարան. «Վասն թաղման եւ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

№ 101

ՊԱՏԱՐԻԿՆԵՐ

ա) ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Թերթերը՝ *5։*— Գրակը՝ *1։*— Մեծությունը՝ *38,3×25×0,2 սմ.։*— Նյութը՝ *դեղնած հաստ թուղթ։*— Կազմը՝ *չունի։*— Վիճակը՝ *քայքայված, ձեռագրից պոկված։*— Գրությունը՝ *երկսյուն։*— Տողերը՝ *37։*— Գծումները՝ *ճնշոտով։*— Գիրը՝ *բոլորգիր։*— Զարդագրություն՝ *չկա։*— Գրիչը՝ *անհայտ։*— Ժամանակը՝ *16-րդ դար։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մի պրակ միայն Հայսմավուրքից, թերթերը խառնված: Սկսում է նոյեմբերի 1-ից (Տօն Ամենայն սրբոց), վերջը՝ անորոշ:

բ) ՔԱՐՈԶԳԻՐՔ

Թերթերը՝ *10։*— Գրակը՝ *1։*— Մեծությունը՝ *22×17,2×0,2 սմ.։*— Նյութը՝ *դեղնած բարակ ողորկ թուղթ։*— Կազմը՝ *չունի։*— Վիճակը՝ *բավարար, սակայն ձեռագրից պոկված։*— Գրությունը՝ *երկսյուն։*— Տողերը՝ *35։*— Գծումները՝ *ճնշոտով։*— Գիրը՝ *մանր բոլորգիր։*— Զարդագրություն՝ *կան մի քանի դեղեցիկ լուսանցազարդեր, թռչնագրեր և մի հատ զարդագիր։*— Պատվիրատուն՝ *Աստապատեցի Միքայել վարդապետ։*— Ժամանակը՝ *15—16-րդ դար։*— Վայրը՝ *Աստապատ (Նախիջևանի շրջան)։*

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1ա.— *Ով սուրբ քարոզողք, յիշեցէք ի Քրիստոս ստացող սուրբ գրոցս Աստապատեցի զՄիքայէլ (հետագայում այս անունը ջնջված և վրան «Խաչատուր» է գրված) վարդապետն, եւ զծնողսն իւր եւ զեղբարսն, եւ ամենայն արեան մերձաւորսն։*

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 9ա.— *Յիշեցէք զմեղօք լցեալ Խաչատուր եւեթ անուամբ վարդապետս, զհոգեւոր հայր եւ առաջնորդն իմ զՅովսէփ վարդապետն։*

գ) ԿԱՆՈՆ ՍՐԲՈՅՆ ԲԱՐՍՂԻ ԿԵՍԱՐԱՑԻՈՅ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Թերթերը՝ *9։*— Գրակը՝ *1։*— Մեծությունը՝ *19,5×15,7×0,2 սմ.։*— Նյութը՝ *դեղնած և խոնացած հասարակ թուղթ։*— Կազմը՝ *չունի։*— Վիճակը՝ *քայքայված և կեղտոտած։*— Գրությունը՝ *միասյուն։*— Տողերը՝ *23—28։*— Գծումները՝ *ճնշոտով։*— Գիրը՝ *բոլորգիր։*— Զարդագրություն՝ *չկա։*— Ժամանակը՝ *18-րդ դար։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա-4բ.— Մէ (57) «Կանոն սրբոյն Բարսղի Կեսարու հայրապետին ասացեալն»:

Թ. 5ա-9բ.— Հակոբ Ղրիմեցու աշխատությունը ազգակցական կապերի և ամուսնության օրենքների մասին:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 3ա.— *...Մածանին և Ովանէսին, գրվեցաւ Թիվն 1875-ին։*

Թ. 6ա.— *Տէր Կարապետ։*

Թ. 7ա.— *Ի Թիվն 1875-ին։*

դ) ԺՈՂՈՎԱԾՈՒ ԿՐՕՆԱԿԱՆ ԵՐԳՈՑ (Տաճկերեն)

Թերթերը՝ *8։*— Գրակը՝ *1։*— Մեծությունը՝ *16,7×11,7×0,2 սմ.։*— Նյութը՝ *սպիտակ հասարակ թուղթ։*— Կազմը՝ *չունի։*— Վիճակը՝ *ոչ բավարար։*— Գրությունը՝ *միասյուն։*— Տողերը՝ *19։*— Գծումները՝ *թուղթը թափանցիկ է, երևի թղթի տակ դրված գծված ուրիշ թղթի միջոցով է գրված։*— Բառանջատումը՝ *կետերով։*— Գիրը՝ *նոտրգիր։*— Զարդագրություն՝ *թ. 2ա-ում կա միայն մի հատ հասարակ թռչնագիր։*— Գրիչը՝ *անհայտ։*— Ժամանակը՝ *18-րդ դար։*— Վայրը՝ *շատ հավանաբար Կոստանդնուպոլիս։*

Պատառիկի վերջում թ. 8բ-ում կա մի հայերեն երգ, կարմիր թանաքով գրված։

Առայվուտուն քամին էլնէր,
Մաղէր զիս, մաղէր զիս.
Քոյ սէրն ինձի կրակ եղեւ,
Տաղէր զիս, տաղէր զիզ.
Մի թափիր վարթ, մի թափիր վարթ,
Այ երեցայ ես քոյ տարտէն.
Մի թափիր, մի թափիր վարթ,
Մի թափիր վարթ, ես եմ ղարիբ,
Ջունիմ աշխար(հ), ելամ հայր եւ հայ ելան։

Արքութիւնն հովերէն, հովերէն,
Քոյ սէրն ինձի գրակրն եղեւ
Ծովերէն, ծովերէն։

ե) ՀԱՄԱՅԻԼ (Հատվածներ Նարեկից)

Թերթերը՝ *3։*— Մեծությունը՝ *44×8,4 սմ.։*— Նյութը՝ *հասարակ խոնացած բարակ թուղթ։* Կազմը՝

չունի, պահվում է լաթե տոպրակի մեջ։— Վիճակը՝ պատռած և քայքայված, վերջից թերի։— Գրությունը՝ միասյունյա։— Տողերը՝ անհավասար։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրությունը՝ առաջին թերթում կա մի հասարակ գունավոր զարդարանք, հասարակ ջրաներկ գույներով ներկված՝ վրան շեղակի գրությամբ։ Երրորդ թերթում կա տղամարդու մի ջրաներկ նկար, երկու ձեռքով տեր-ողորմյան բռնած։— Գրիչը՝ Խաչգուլ։— Ժամանակը՝ 18-րդ դար։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 2.— Եղիցի օգնական եւ պահապան ծառայիս Աստուծոյ Խաչգուլին։

զ) ՀԱՄԱՅԻԼ
(Հատվածներ Նարեկից)

Թերթը՝ *1։—* Մեծությունը՝ *226×7,8 սմ.։— Նյութը՝ հասարակ հաստ սպիտակ թուղթ։—* Կազմը՝ *չունի, պահվում է լաթե տոպրակի մեջ № գ պատառիկի հետ։—* Վիճակը՝ *բավարար, սակայն սկզբից թերի։—* Գրությունը՝ *միասյունյա։—* Գիրը՝ *նոտրգիր։* Զարդագրությունը՝ *կան երեք հասարակ նկարներ, որոնցից մեկը սուրբ Գեորգի նկարն է, ձի հեծած, նետով սպանում է վիշապին։ Կան նաև վեց շրջանակներ՝ մեջը գրությամբ։—* Ժամանակը՝ *1719 թ.։*

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Գրեցաւ համայիլս ի պահպանութիւն ծառայիս Աստուծոյ… զխանէսն, զԹոխոյնն, զԹառոյն, Բաբասուն, Շաղգ(ու)լին։ Գրեցաւ թվին ՌՃԿԸ-ն (1719 թ.), ամէն։ Թ(ու)ին ՌՄՀԲ (1823 թ.)։ Ես տի(ր)ացու Օվանէս գրնցաւ պարխպի (պարսիկի) (?) թիւն ՌՄՀԲ-ին (1823 թ.)։ Բաբասուն, Շաղգ(ու)լին, Ղարիպին։

է) ՀԱՄԱՅԻԼ
(Աղոթքներ և հատվածներ ավետարաններից)

Թերթը՝ *1։—* Մեծությունը՝ *81×8,5 սմ.։—* Նյութը՝ *սպիտակ հասարակ հաստ թուղթ։—* Վիճակը՝ *սկզբից թերի։—* Գրությունը՝ *միասյունյա։—* Գիրը՝ *նոտրգրի և շղագրի խառնուրդ։—* Զարդագրությունը՝ *չունի։—* Գրիչը՝ *Ստեփաննոս Բաղրամ։—* Պատվիրատուները՝ *Հովսեփ, Սարգիս և այլք։—* Ժամանակը՝ *1828 թ.։—* Վայրը՝ *Ջուղա։*

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

…ծառայտ քոյ Գուլնաբխին, Յովաէփին, Սարգսին օգնեայ։

..եւ բժշկեայ Տայրախաթուն, Գ(ուլ)նաբխուն, Յովսէփին, Սարգսին, օգնեայ, ամէն։

Փրկեայ Գուլն(ա)բխին, Յովսէփին, Ս(ա)րգսին, օգնեայ։

Գրեց(ա)վ ի դրան Սուրբ Առեստեաց յեկեղեցումն ի ձեռն մեր՝ նորընծայ Ստեփ(ա)ննոս Բ(ա)ղր(ա)մին, եւ վասն պահպանութիւնն եղեւ ի Ջուղա 1828 5-շ(ա)բ(աթ)ի։

ը) ՀԱՄԱՅԻԼ

Թերթը՝ *1։—* Մեծությունը՝ *104×7,6 սմ.։—* Նյութը՝ *խունացած հասարակ հաստ թուղթ։—* Վիճակը՝ *սկզբից և վերջից թերի։—* Գրությունը՝ *միասյունյա։—* Գիրը՝ *նոտրգիր։—* Զարդագրությունը՝ *կա մի հատ հասարակ նկար տղամարդու, 13×7 սմ. մեծությամբ։—* Ժամանակը՝ *18-րդ դար։—* Վայրը՝ *անհայտ։*

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պատառիկի կռնակի վերևի մասում կա երեք տող ծածկագիր — փիթեկ, որի ներքև գրված է. «Մ(ա)լ(ա)մս աչաց ամ(ենայն) չար պ(ա)տ(ուհա)սի եղեցի, ամեն»։

թ) ԹՈՒՂԹ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ

Թերթը՝ *1։—* Մեծությունը՝ *60×26,5 սմ.։—* Նյութը՝ *խունացած հասարակ հաստ թուղթ։—* Վիճակը՝ *վատ, վերևից ներքև երեք մասի կտրատված։ Նամակի ձախակողմյան լուսանցքը և բոլոր տողերի առաջին մի քանի բառերը կտրված և կորած են։—* Գրությունը՝ *միասյունյա։—* Տողերը՝ *48։—* Գիրը՝ *նոտրգիր։—* Զարդագրությունը՝ *նամակի սկզբի երկու տառերը՝ «ՅԻ.» գրված են գեղեցիկ մեծ թռչնագրերով, իսկ շարունակությունը՝ «ՔԻ. ԾՌՅ. ՏՐ. ՅՈՀԱՆՆԷՍ ՍՐԲ. ԵՊՍԿՊՍ.» գրված է մեծատառերով և կարմիր թանաքով։ Նամակի վերևի աջակողմյան անկյունում «պատարագ» բառը գրված է դեղին թանաքով, և տողից ներքև իջնող տառերի պոչերը բոլորաձև են և մեջմեջ անցած։—* Գրիչը՝ *Հովհաննես պատրիարք Ջամաշըրջյան Բաբերդցի։—* Ժամանակը՝ *1804 թվի սեպտեմբերի 10։—* Վայրը՝ *Կոստանդնուպոլսի պատրիարքարանի Սուրբ Աստվածածնի մայր եկեղեցում։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հորդորակաճ մի ճամակ է սա՝ գրված Վաճա ճոգևոր դասիճ և ժողովրդյաճ Կոստաճդճուպոլսո պատրիարf Հովճաճճես Ջամաշըրչյաճ Բաբերդցուց, որը պատրիարf է եղել երկու աճգամ՝ 1800—1801 և 1802—1813 թ. թ.։

ժ) ԹՈՒՂԹ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ

№ ժ-ի պատրիարքական նամակը՝ կտրված երկարությամբ երեք-չորս շերտի, հետևի կողմում գրված համայիլ, Ղազարի, Էհնոյի, Մարգարի և Ալահվերդու համար։

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ամսագրի համարներում տպագրված ներկա ցուցակը, հիմնականում, կազմված է Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի ավարտական կուրսի ուսանողների կողմից, որպես գործնական աշխատանք Հայկական հնագրության առարկայից։ Կատարված աշխատանքը, իհարկե, ստուգվել, քննվել և խմբագրվել է ղեկավար դասախոսի կողմից։ Բացի ուսանողներից, ցուցակի կազմման աշխատանքներում գործուն մասնակցություն է ունեցել Մայր Աթոռի գրադարանապետ Նուբար Միքայելյանը, առանձնապես՝ ձեռագրերի վերջին մասի ցուցակագրության ժամանակ։

Մայր Աթոռի ներկա 100 ձեռագրերը, մեծ մասամբ, հավաքվել են Մայր Հայրենիքի և Սփյուռքի հայ հավատացյալների վերջին տարիներս նվիրաբերած ձեռագրերից։ Հետևելով հայկական վանքերի անցյալի շնորհակալ տրադիցիային, ուր խնամքով ու գուրգուրանքով պահպանել, ընդօրինակել են նախնիքների ամեն մի պատառիկը, Մայր Աթոռը հրատարակում է վերջին տարիների իր հավաքած ձեռագրերի ցուցակը, նպատակ ունենալով նրանք ներկայացնել հայագիտության լայն շրջանի ուշադրությանը, հուսալով, որ նրանք գուցե որևէ չափով օգտակար լինեն հայագիտության մեր մեղվաջան մշակներին։

Ինչ վերաբերում է կազմած ցուցակի որակին, ապա այդ մասին մենք ոչինչ չենք ուզում ասել, միայն ուզում ենք կրկնել մեր հիշատակագիրների սիրած արտահայտությունը՝ «Անմեղադիր լերուք, զի կարն մեր այս էր»։

Ձեռագրերի ցուցակը հետագայում, իհարկե, կշարունակվի, քանի որ մեր գիտակից հավատացյալները շարունակում են իրենց նվիրաբերումները Մայր Աթոռին՝ ցանկանալով կորստից ազատել նրանք և գիտական ուսումնասիրության համար օգտակար դարձնել։

Ձեռագրերի այս ցուցակը, Վեհափառ Հայրապետի ցանկությամբ, կարտատպվի առանձին հատորով, որի վերջում կկցվի նվիրատուների, ինչպես նաև ցուցակում հիշված անունների ցանկը։

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ